«ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-230-07.04.2022-ԳԿ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Արթուր Հովհաննիսյանի և Լիլիթ Մինասյանի կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված «Զանգվածային լրատվության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) վերաբերյալ ներկայացնում ենք հետևյալը.

Նախագծով առաջարկվում է լրացում կատարել «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասում: Առաջարկվող կարգավորումից ստացվում է, որ լրագրողի հավատարմագրումը կարող է դադարեցվել ոչ միայն նրան հավատարմագրման ներկայացրած լրատվական գործունեություն իրականացնողի դիմումով, այլ նաև նրան հավատարմագրած պետական մարմնի կողմից:

Նախագծին կից ներկայացված հիմնավորման մեջ նախագծի ընդունման անհրաժեշտությունը հիմնավորվում է հետևյալ կերպ.

««Զանգվածային լրատվության մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ պետական մարմիններն իրավասու են լրագրողի հավատարմագրման մերժման և դադարեցման այլ հիմքեր սահմանել լրագրողների հավատարմագրման կարգով: Սակայն նույն հոդվածի 5-րդ մասով սահմանված է, որ լրագրողի հավատարմագրումը կարող է դադարեցվել նրան հավատարմագրման ներկայացրած լրատվական գործունեություն իրականացնողի դիմումով: Ստացվում է, որ մի կողմից պետական կառույցը սահմանում է լրագրողի հավատարմագրումը դադարեցնելու հիմքերը, սակայն գործնականում չի կարող հավատարմագրման դադարեցման հիմքերի առկայության դեպքում որևէ կերպ դադարեցնել լրագրողի հավատարմագրումը, քանի որ անհրաժեշտ է հավատարմագրման ներկայացրած լրատվական գործունեություն իրականացնողի դիմում:

Օրենքի բացը լրացնելու և առաջին հերթին լրատվական գործունեություն իրականացնողի և պետական մարմինների միջև փոխգործակցությունն առավել արդյունավետ դարձնելու, պետական մարմինների ներքին կանոնների խախտման դեպքերում գործիքակազմ ունենալու համար առաջարկվում է, որպեսզի նաև պետական մարմինը, որը հավատարմագրել է լրագրողին, կարողանա աշխատանքային գոտում գործող կարգապահական կանոնների խախտման դեպքում դադարեցնել լրագրողի հավատարմագրումը։»։

Սույն նախագծի կապակցությամբ հայտնում ենք հետևյալը.

«Զանգվածային լրատվության մասին» օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ լրագրողի հավատարմագրումը կարող է դադարեցվել նրան հավատարմագրման ներկայացրած լրատվական գործունեություն իրականացնողի դիմումով, իսկ նույն հոդվածի 1-ին մասի 4-րդ պարբերության համաձայն՝ լրագրողի հավատարմագրման մերժման և դադարեցման այլ հիմքերը կարող են սահմանվել համապատասխան պետական մարմնում լրագրողների հավատարմագրման կարգով։

Վերոգրյալ իրավանորմերի վերլուծությունից պարզ է դառնում, որ օրենսդիրը նախատեսել է լրագրողի հավատարմագրումը դադարեցնելու մեկ եղանակ՝ նրան հավատարմագրման ներկայացրած լրատվական գործունեություն իրականացնողի դիմումը։ Ուստի «Զանգվածային լրատվության մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ պարբերությամբ նախատեսված այն օրենսդրական հնարավորությունը, որի համաձայն՝ լրագրողի հավատարմագրման մերժման և դադարեցման այլ հիմքերը կարող են սահմանվել համապատասխան պետական մարմնում լրագրողների հավատարմագրման կարգով, ***վերաբերում է միայն լրագրողին հավատարմագրման ներկայացրած լրատվական գործունեություն իրականացնողի կողմից***՝ լրագրողի հավատարմագրումը դադարեցվելու դիմում ներկայացնելու այլ հիմքեր սահմանելուն։

Այս առումով առաջարկում ենք դիտարկել լրագրողին հավատարմագրած պետական մարմնի կողմից սեփական նախաձեռնությամբ հավատարմագրումը դադարեցնելու հիմքերն օրենքով նախատեսելու հարցը։

Հիշյալ առաջարկությունը բխում է ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածի պահանջներից, որոնց համաձայն՝ հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս *օրենքները* պետք է սահմանեն այդ *սահմանափակումների հիմքերը* և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ: